

Կ. Պոլիսի «Համազգյաց ընկերությունը»

Չատինյան Զոյա

Հանգուցային բառեր. XIX դ. առաջին կես, Պոլսահայ գաղութ, «Համազգյաց ընկերություն», հասարակական կյանք, Բերա, Կ. Պոլիս

XIX դ. առաջին կեսին ազգային-ազատագրական շարժումները արեկոծում էին երբեմնի հսկայածավալ Օսմանյան կայսրության հիմքերը: Արտաքին քաղաքականությունում կրած պարտությունները մի կողմից, մյուս կողմից սուլթանի լծի տակ տառապող ժողովուրդների պայքարը ստիպում են կայսրությանը դիմելու բարենորոգումների, որոնք նպատակ ունեին որոշ չափով թեթևացնելու ստեղծված կացությունը: Այս բարեփոխումները պատմության մեջ մտան «Թանզիմաթ» կամ «Հաթթ-ը շերիֆի»¹ անունով:

«Թանզիմաթի» ընդունման արդյունքում ստեղծված նպաստավոր պայմանների շնորհիվ XIX դ. առաջին կեսին պոլսահայ գաղութը դառնում է հայ հասարակական մտքի զարգացման գլխավոր կենտրոններից մեկը: Եվրոպայում կրթություն ստացած և Կ. Պոլիս վերադարձած հայ երիտասարդները աշխուժացնում են հայ հասարակական կյանքը: Այս երիտասարդների կողմից Օսմանյան կայսրության տարածքում մեծամասամբ մայրաքաղաք Կ. Պոլսում, հիմնվում են հասարակական, մշակութային ընկերություններ, որոնց հիմնական նպատակը կրթական և դաստիարակչական գործունեություն ծավալելն էր:

Այդ ընկերություններից էր Ռափայեյան և Մուրադյան վարժարանի սաների, հիմնականում կաթոլիկ հայերի կողմից 1846թ. մարտի 1-ին Կ. Պոլիսի Բերա թաղամասում հիմնած «Համազգյաց ընկերությունը»²: Ընկերության ստեղծման գաղափարը հղացվել է Փարիզում դեռևս 1845 թվականի վերջերին, իսկ ստեղծման նախապատրաստական աշխատանքները սկսվել է, երբ Պադույից Կ. Պոլիս է վերադառնում Մ. Պեշիկթաշյանը³: Այս ընկերությունը Վ. Մինասյանի գլխավորությամբ⁴ հիմնադրել են Մ. Սամանձյանը, Յ. Դավությանը, Ա. Լուրթիանը, Խ. Գազալյանը, Հ. Վարդանյանը⁵ Կ. Թյուլպենտձյանը, Ա. Ասկերյանը, Ս. Ազնավուրյա-

¹ Բարենորոգումների նախագիծը կամ «Թանզիմաթը» հրապարակվել է 1839թ. նոյեմբերի 3-ին Օսմանյան կայսրության սուլթան Աբդուլ Մեջիդի կողմից: Տե՛ս Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 455-456:

² «Ձատագոյություն Համազգյաց ընկերության», Կ. Պոլիս, 1851, էջ 1, «Արևելք», 1898 նոյեմբերի 5, թիվ 3853, Պերպերեան Ա. Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1861, էջ 350-351:

³ Սաֆարյան Վ., Մկրտիչ Պեշիկթաշյան, Երևան, 1972, էջ 40:

⁴ «Բազմավեպ», 1900 դեկտեմբեր, թիվ 12, էջ 532:

⁵ Հովսեփ Վարդանյան (Հովսեփ Վարդան փաշան) (1815-1879), հռչակավոր գիտնական, պատմաբան և քաղաքագետ: Ծնվել է 1815 թ. Կ. Պոլսում: Տիրապետել է մի շարք օտար լեզուների՝ ֆրանսերեն, անգլերեն, արաբերեն, թուրքերեն և այլն: 1837 թվականից շուրջ 25 տարի անընդմեջ զբաղեցրել է Օսմանյան կայսրության նավատորմի նախարարության թարգմանչի պաշտոնը, ստացել փաշայության աստիճան: Հեղինակել է «Նապոլեոն Բոնապարտի պատմությունը» (1855-1856, հատոր 1-6, հայատառ թուրքերեն), «Մահմանադրական ճշմարտություններ և անոնց պարտավորությունները» (1863, հայերեն), «Արևելյան պատերազմի պատմությունը» (1871) և այլ աշխատություններ: Տե՛ս Վ. Զարդարյան, Հիշատա-

նը⁶, Մ. Հեքիմյանը⁷, Մ. Պեշիկթաշյանը⁸ և այլք:

«Համազգյաց ընկերության» նախագահը Մխիթարյան միաբանության անդամ Վ. Մինասյանն էր: Վ. Ջարդարյանը և հայ մշակութային ընկերությունների պատմագիր Վ. Պողոսյանը Մ. Պեշիկթաշյանին համարում են Համազգյաց ընկերության ատենադպիր⁹, այն դեպքում, երբ Մ. Պեշիկթաշյանի մասին ոչ մի խոսք չկա, թե՛ 1846թ. Կ. Պոլսում հրատարակված «Յայտարար նախակրթութիւն ընկերութեան Համազգեաց» անունով հայտարարությունում, թե՛ 1851թ. լույս տեսած «Ջատագովություն Համազգյաց ընկերության» գրքույկում: Որ Մ. Պեշիկթաշյանը «Համազգյաց ընկերության» նախաձեռնողներից, գաղափարական դեկավարներից մեկն է եղել, փաստարկվում է իր իսկ ժառանգության այն էջերով, որոնք ուղղակիորեն առնչվում են ընկերության հիմնադրմանը և հետագա գործունեությանը: Մեզ են հասել ընկերության կազմավորման, նրա գործունեությանը առնչվող Մ. Պեշիկթաշյանի ճառերից երկուսը¹⁰:

Ընկերության սկզբնական անդամների թիվը հասնում էր 76-ի¹¹, սրա մասին է վկայում 1846 թ. մարտի 17-ին Կ. Պոլսի Բերա թաղամասում Համազգյաց ընկերության գումարած առաջին ժողովի հրապարակած հայտարարությունը¹², որի տակ իրենց ստարագրությունն էին դրել ընկերության բոլոր 76 անդամները¹³: Ընկերությանը կարող էր անդամագրվել յուրաքանչյուր հայ, նախապես սահմանված

կարան, Կահիրե, Ա մաս, 1935, էջ 135:

⁶ Մերովբե Ազնավուրը (1814-1890) ծնվել է Կ. Պոլսում, հայ կաթոլիկ Ազնավուրյանների գերդաստանում: Ս. Ազնավուրը 1840-ական թվականների պոլսահայ ուսումնաստենչ այն երիտասարդների թվում էր, ում հաջողվեց բարձրագույն կրթություն ստանալ Եվրոպայում: Նա սովորել է Լոնդոնում և Մանչեսթրում: Տե՛ս Ջարդարեան Վ., Յիշատակարան (1512-1933), Գ մաս, Գահիրե, 1939, էջ 77, «Արևելք», 1898 նոյեմբերի 5, թիվ 3853, Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, Վիեննա, հատոր Ա, 1957թ., էջ 52:

⁷ Սրապիոն Հեքիմյանը հայ դրամատուրգ, թատերական- մշակութային գործիչ է: Ծնվել է 1832 թ. օգոստոսի 16-ին Կ. Պոլսում: Սովորել է Վենետիկի հայկական Սուրատ- Ռաֆայելյան վարժարանում, տիրապետել մի քանի օտար լեզուների: 1856 թ. Կ. Պոլսում հիմնել է առաջին պրոֆեսիոնալ հայկական թատրոնը, որը ներկայացումներ է տվել հայերեն, թուրքերեն, իտալերեն լեզուներով:

⁸ Սկրտիչ Պեշիկթաշյան (1828-1868) արևմտահայ բանաստեղծ, դրամատուրգ: Ծնվել է օգոստոսի 18-ին Կ. Պոլսում: 1839-1845 թթ. սովորել է մուրադյան վարժարանում: Նա համարվում է արևմտահայ կանոնավոր մշտական թատրոնի հիմնադիրը: Մ. Պեշիկթաշյանը էական դեր է ունեցել ազգային սահմանադրության (1860) ստեղծման գործում: Աջակցել է «Բարեգործական ընկերություն հայոց»-ի ստեղծմանը (1860): Նա հեղինակել է «Կոռնակ», «Արշակ», «Վահե» պատմական ողբերգությունները և այլ աշխատություններ: Տե՛ս Մաֆարյան Վ. նշվ. աշխ., էջ. 8-23, «Բազմավեպ», 1900 դեկտեմբեր, թիվ 12, էջ 529-536, Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., էջ 52:

⁹ Վ. Ջարդարյան, նշվ. աշխ., էջ 133, Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., էջ 52:

¹⁰ Մաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 48:

¹¹ «Բազմավեպ», 1900 դեկտեմբեր, թիվ 12, էջ 532, Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., էջ 49:

¹² Արշալույս Արարատյան», 1846 ապրիլի 19, թիվ 257:

¹³ «Ջատագովություն Համազգյաց ընկերության», Կ. Պոլիս, 1851, էջ 4:

10 դահեկան անդամավճար¹⁴ և ամսական 5 դահեկան վճարելով¹⁵:

Սակայն 1848թ. ընկերության կանոնադրությունը որոշակի սահմանափակումներ մտցրեց ընկերության անդամակցության կարգի մեջ, ըստ որի՝ Համազգայաց ընկերության անդամ կարող էր դառնալ յուրաքանչյուր հայ, ով հարում էր կաթոլիկ եկեղեցուն¹⁶: Ժամանակի ընթացքում ընկերության անդամների թիվը ավելացավ և 1848թ. փետրվարի դրությամբ արդեն անցնում էր 600-ից¹⁷: Ինչպես վկայում են ժամանակակիցները նորաստեղծ Համազգայաց ընկերությունը օր օրի սկսեց ծաղկում ապրել, ընկերությանը անդամակցեցին ազգի երևելի անձինք¹⁸:

Համազգայաց ընկերության ֆինանսական միջոցները գոյանում էին անդամավճարներից, նվիրատվություններից և բարեգործական միջոցառումներից: Չնայած միջոցների սղությանը հիմնադրումից 2 տարի անց՝ 1848 թ. սկզբին ընկերությունը ձեռք էր բերել սեփական տուն, որը ծառայում էր որպես հավաքատեղի: Այն գտնվում էր «Կ. Պոլիս, Բերա թաղամաս, Լալե փողոց, թիվ 13» հասցեում¹⁹:

Համազգայաց ընկերությունը ուներ իր ծրագիրն ու կանոնադրությունը, վարչական գործադիր մարմինը, որը պիտի տնօրիներ ընդհանուր աշխատանքները:

1846թ. մարտի 16-ին ընկերությունը առաջին գումարած ժողովում հրապարակեց հայտարարություն, որտեղ 10 կետերի տեսքով ներկայացված էին ընկերության գործունեության հիմնական նպատակը, առաջիկա անելիքները, ծրագրերը: Այդ կետերն էին՝ ա) հասնել համազգային միասնականության և միաբանության, բ) օգտակար գրքեր գրել, թարգմանել, և դրանք տպագրության միջոցով ամենքին հասցնել, գ) գյուղերում, քաղաքներում հիմնել դպրոցներ, ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների համար, դ) ազգի մեջ ծաղկեցնել երկրագործության արվեստը, ե) հավաքել ու հետազոտել հայրենի հնությունները, հին գրքերը, ձեռագիր մատյանները, հին դրամներ, գ) նյութեր հավաքել բոլոր տեսակի կենդանիների և բնական պատմության վերաբերյալ, է) եվրոպական վաճառականության օրենքները տարածել ազգի մեջ, ը) զարգացնել մետաղագործությունը²⁰:

Ընկերությանն անհրաժեշտ էր կանոնադրություն, որը հիմնադիրների խնդրանքով գրեց Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Պետրոս Մինասյանը²¹: Համազգայաց ընկերության առաջին նախաձեռնություններից էր Տրապիզոնում հայկական վարժարանի հիմնումը, որը այդպես էլ իրականություն չդարձավ, քանի որ մինչ աշխատանքների ավարտը դադարեց գոյություն ունենալ

¹⁴ «Արևելք», 1898 նոյեմբերի 5, թիվ 3853.

¹⁵ Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., էջ 52:

¹⁶ Ձատագովություն Համազգայաց ընկերության», Կ. Պոլիս, 1851, էջ 34:

¹⁷ «Արևելք», 1898 նոյեմբերի 5, թիվ 3853, Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., էջ 53:

¹⁸ «Բազմավեպ», 1900 դեկտեմբեր, թիվ 12, էջ 532

¹⁹ «Արևելք», 1898 նոյեմբերի 5, թիվ 3853, Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., էջ 53:

²⁰ «Յայտարար նախակարգութիւն ընկերութեանն Համազգեաց», Կ. Պոլիս, 1846թ., էջ 6, «Արշալույս Արարատյան», 1846 ապրիլի 19, թիվ 257, «Ձատագովություն Համազգայաց ընկերության», Կ. Պոլիս, 1851, էջ 4, «Բազմավեպ», 1900 դեկտեմբեր, թիվ 12, էջ 532, Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., էջ 50:

²¹ Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., էջ 51:

«Համազգյաց ընկերությունը»²²:

Ընկերությունն ունեցել է մի շարք հաստատություններ, իր դպրոցը, ուր հավաքվում էին ընկերության անդամները և այլ քաղաքացիներ, գրադարան²³: Ժամանակի մամուլի վկայությամբ ընկերությունն ունեցել է նաև իր վարժարանը՝ Համազգյաց վարժարան, բավականին դրամական միջոցներ, որ օգնել է զանազան կազմակերպությունների, այդ թվում՝ Արամյան ընկերությանը²⁴:

«Համազգյաց ընկերության» ծրագրի համաձայն ստեղծվել են՝ 1847թ.՝ «Առևտրական ընկերությունը», որի նպատակն է եղել «առավել ազգին մեջ վաճառականությունը հարուցանել քան թե շահ փնտրել»²⁵, 1848թ.՝ «Երկրագործական ընկերությունը» և «Թանգարան վերածնությունը», որի անդամ կարող էին դառնալ բոլոր ցանկացողները՝ առանց կրոնական խտրության²⁶:

19-րդ դարի հայ հասարակությունը գաղափարապես այնքան չէր հասունացել, որպեսզի ըմբռնի, որ դավանաբանական տարբերությունները խոչընդոտ չեն հանդիսանում նույն ազգին պատկանող մարդկանց համար՝ միավորելու իրենց կարողությունները՝ հանուն համընդհանուր նպատակի իրագործման: Այն էր հայ հասարակական կյանքի զարգացումն ու բարգավաճումը: «Համազգյաց ընկերության» գործունեության հենց սկզբից ընկերության դեմ էին դուրս եկել պոլսահայ ողջ պահպանողական տարրերը՝ Անտոն Հուսինյանի գլխավորությամբ:

1847թ. սկզբին «Համազգյաց ընկերության» ներսում հակասություններ առաջացան դավանաբանական հենքի վրա, որի համար առիթ հանդիսացավ նույն թվականի փետրվարի 22-ին ընկերության մասին տպագրված հոդվածը, որը ամենևին էլ իր մեջ չէր պարունակում դավանաբանական որևէ հարց²⁷: Ընկերության ներսում հակասությունները ավելի սրվեցին 1848թ. սկզբին: Արդյունքում «Համազգյաց ընկերության» կաթոլիկ անդամների մեծամասնությունը պահանջեց իրենց շարքերից հեռացնել ոչ կաթոլիկ անդամներին²⁸: «Համազգյաց ընկերության» շուրջ սկիզբ առած վեճը դուրս եկավ ընկերության սահմաններից և հասավ ընդհուպ մինչև Բարձր դուռ և Հռոմ²⁹: Արդյունքում ընկերությունը ստիպված եղավ փոխել իր կանոնադրության մի շարք կետեր: Ընկերության փոփոխված կանոնադրությունը Բարձր դռան հրամանով 2 անգամ՝ հունիսի 28-ին և հուլիսի 6-ին, ներկայացվել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին և հավանության արժանացել³⁰:

Փոփոխված կանոնադրությունը բաղկացած էր 41 հոդվածից, որտեղ մեկ ան-

²² «Բազմավեպ», 1900 դեկտեմբեր, թիվ 12, էջ 532:

²³ «Արշալույս Արարատյան», 1848 փետրվարի 20, թիվ 305:

²⁴ «Եվրոպա», 1848 նոյեմբերի 7, թիվ 45:

²⁵ «Հանդես ամսօրյա», 1957, էջ 333:

²⁶ «Արշալույս Արարատյան», 1848 ապրիլի 20, թիվ 310:

²⁷ Չատագովություն Համազգյաց ընկերության», Կ. Պոլիս, 1851, էջ 7-8:

²⁸ «Արշալույս Արարատյան», 1848 ապրիլի 20, թիվ 310, Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., էջ 53:

²⁹ Չատագովություն Համազգյաց ընկերության», Կ. Պոլիս, 1851, էջ 11, Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., էջ 53:

³⁰ Չատագովություն Համազգյաց ընկերության», Կ. Պոլիս, 1851, էջ 42-43:

գամ ևս վերահաստատվում էին ընկերության հիմնական նպատակները, կանոնակարգվում էին ընկերության անդամների և գործադիր մարմնի փոխհարաբերությունները, ինչպես նաև սահմանում էր վերջիններիս պարտականությունները և իրավունքները: Մասնավորապես՝ Կանոնադրության երկրորդ հոդվածում ասվում էր, որ ընկերությանը կարող են անդամագրվել միայն կաթոլիկ հայերը³¹: Հինգերորդ հոդվածը ասում է, որ ով երեք ամիս անընդմեջ առանց հիմնավոր պատճառի ուշացնի նախապես սահմանված ամսական վճարումը, հեռացվում է ընկերությունից³²: Իններորդ հոդվածը սահմանում է, որ կանայք նույնպես կարող են անդամագրվել ընկերությանը, սակայն նրանց անդամակցությունը պետք է սահմանափակվեր միայն առաջարկներ ներկայացնելով, ինչպես նաև ընկերության ժողովներում կարող էին քննարկվել նրանց կատարած թարգմանչական գործերը: Սակայն կանանց չէր թույլատրվում մասնակցել ընկերության ժողովներին, առավել ևս ընկերությունում որևիցե պաշտոն զբաղեցնել³³:

12-րդ հոդվածը սահմանում էր «Համազգյաց ընկերության» վարչական և գործադիր մարմինները, ըստ որի՝ ընկերությունը ուներ 3 տեսուչ, 12 խաղաղարար, 24 խորհրդական, 2 ատենադպիր (քարտուղար), 5 գանձապետ և 4 քննիչ, որոնցից երկուսը աշխարհիկ, մյուս երկուսը՝ եկեղեցական³⁴: 12-32 հոդվածները կարգավորում և սահմանում էին նշված պաշտոնները զբաղեցնող անձանց գործառույթները և իրավունքները³⁵: Կանոնադրության մյուս հոդվածները հիմնականում վերաբերում էին այլ քաղաքների բնակիչների՝ ընկերությանը անդամակցելու կարգին, ընկերության ժողովներին կողմնակի անձանց ներկայությանը և այլն³⁶: Իսկ վերջին՝ 41-րդ հոդվածը մասնավորապես ասում էր, որ ընկերության անդամները պետք է լինեն կաթոլիկ հայեր և Օսմանյան կայսրության հպատակներ, հակառակ դեպքում նրանք կհեռացվեն ընկերությունից³⁷:

Փոփոխված կանոնադրությունը հրատարակվեց 1851 թ., սակայն դա էլ չփրկեց «Համազգյաց ընկերությանը» և այն առժամանակ դադարեց գոյություն ունենալ: «Մասիս» պարբերականը 1852 թ. սեպտեմբերի համարում գրում է. «կը լսենք նաև որ Համազգեաց Ընկերութիւնն ալ խափաներ է»³⁸: Ութ տարի անց նույն «Մասիսի» հրապարակումից իմանում ենք, որ 1860թ. «Համազգյաց ընկերության» նախկին անդամները ընկերության ոգուն ու նպատակին համահունչ ձեռնարկել են իրենց պատկանող Բերա թաղամասի Լալէ փողոցի թիվ 13 տանը մատենադարան կամ ընթերցասրահ բացելու գործը³⁹: Մեկ տարի անց «Համազգյաց ընկերությունը» նորից սկսում է գործել «Բարեգործական ընկերություն հայոց» անունով: 1861 թ. ապրիլի 21-ին ընկերության անդամները նոր ժողով են հրավի-

³¹ Նույն տեղում, էջ 34:

³² Նույն տեղում, 34-35:

³³ Նույն տեղում, էջ 35:

³⁴ Նույն տեղում, էջ 36:

³⁵ Նույն տեղում, էջ 36-40:

³⁶ Չատագովություն Համազգյաց ընկերության», Կ. Պոլիս, 1851, էջ 41-42:

³⁷ Նույն տեղում, էջ 42:

³⁸ Հ. Շփրեմ Կ. Պոլսուեան, նշվ. աշխ., էջ 54:

³⁹ Նույն տեղում:

րում, որտեղ հաստատում են նոր կանոնադրությունը՝ բաղկացած 24 հոդվածից: Կանոնադրության 2-րդ հոդվածը մասնավորապես ասում էր, որ «Համազգյաց ընկերության» անդամ կարող է դառնալ յուրաքանչյուր հայ՝ անկախ դավանաբանական պատկանելիությունից:

Չնայած ընկերությունը շարունակում էր գործել, սակայն ժամանակակիցների վկայությամբ ընկել էր նրա արդյունավետությունը: Իսկ արդեն 1870 թ. ընկերությունը վերջնականապես դադարեց գոյություն ունենալ: Չնայած սրան «Համազգյաց ընկերությունը» երկար տարիներ պահպանեց իր գոյությունը, սակայն այլ ձևաչափով՝ «Համազգյաց ընկերության» կողմից Կ. Պոլսի Բերա թաղամասում բացված, աղջիկների համար նախատեսված վարժարանի ձևով, որը անվանակոչվեց ի պատիվ իր հիմնադիր ընկերության՝ «Համազգյաց վարժարան»⁴⁰: Այն ղեկավարվում էր «Համազգյաց ընկերությանը» առընթեր ստեղծած Տիկնանց «Յառաջդիմասեր ընկերութեան» միջոցով⁴¹:

«Համազգյաց ընկերությունը» XIX դ. առաջին կեսին Կ. Պոլսում ստեղծված կազմակերպություններից ամենանշանավորն էր: Այն իր առաջ դրած խնդիրների արդիականությամբ, հրատապությամբ ու համազգային բնույթով տարբերվում էր նմանօրինակ այլ կազմակերպություններից և իր ուրույն տեղն ունի XIX դ. հայ հասարակական կազմակերպությունների շարքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Արշալոյս Արարատեան», (Զմիւռնիա), 1846, 1848:
2. «Արևելք», (Կ. Պոլիս), 1898:
3. «Բազմավեպ», (Վենետիկ), 1900:
4. «Եվրոպա», (Վիեննա), 1848:
5. «Հանդես ամսօրյա», (Վիեննա), 1957:
6. Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011:
7. Զարդարյան Վ., Հիշատակարան, Կահիրե, Ա հատոր, 1935, Գ հատոր, 1939:
8. Պերպերեան Ա. Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1861:
9. Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, Վիեննա, հատոր Ա., 1957:
10. Սաֆարյան Վ., Մկրտիչ Պեշիկթաշյան, Երևան, 1972:
11. «Յայտարար նախակարգութիւն ընկերութեանն Համազգեաց», Կ. Պոլիս, 1846:
12. «Ջատագովություն Համազգյաց ընկերության», Կ. Պոլիս, 1851:

⁴⁰ «Արևելք», 1898 նոյեմբերի 5, թիվ 3853:

⁴¹ Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., էջ 55:

Союз «Амазгяц» Константинополя

Чатинян Зоя

Резюме

Ключевые слова: *первая половина XIX века, армянская община Константинополя, союз «Амазгяц» (всенародный), общественная жизнь, Бера, Константинополь*

В первой половине XIX века армянская община Константинополя стала одним из главных центров развития общественного мнения Армении. Армянская молодежь, которая училась в Европе, вернулась в Константинополь и активизировала общественную жизнь. Именно эти молодые люди в Османской империи, в основном в столице Константинополе создали социальные и культурные организации, основной целью которых являлось образование и воспитание. Одной из этих организаций является союз «Амазгяц», который был создан учениками коледжа Мурад-Рафаелян 1 марта 1846 года в районе Бера Константинополя. У организации была своя собственная программа и устав, административный исполнительный орган, который должен был управлять общей работой. Финансовые средства организации основывались исключительно на членских взносах, пожертвованиях и благотворительных мерах.

В первой половине XIX века союз «Амазгяц» был самой известной организацией Константинополя. Выдвинутые вопросы отличались от вопросов других организаций, были актуальными и носили национальный характер. Союз «Амазгяц» имеет свое уникальное место среди армянских общественных организаций XIX века.

The Nationwide Unity of Constantinople

Chatinyan Zoya

Summary

Key words: *the first half of the 19th century, Armenian community of Constantinople, “Nationwide Unity”, social life, Bera, Constantinople*

In the first half of the 19th century, the colony of the Armenian community of Constantinople became one of the main centers for the development of Armenian public opinion. The youngsters, that had studied in Europe and returned to Constantinople, started to activate Armenian public life. These young people set social and educational organizations, in the territory of Ottoman Empire, mostly in Constantinople, which aimed at carrying out the educational-upbringing process. One of these companies was “Nationwide Unity”, which was established with the efforts of the students of Murad Rafaelian college, especially by Catholic Armenians, in the district of Bera, in Constantinople, on the first of March, in 1846.

“The Nationwide Unity” was the most outstanding from the organizations, which were founded in the 19th century. With the modernity and urgency and the nationwide character of its goals, it was distinguished from other similar organizations and had its unique place within the 19th century non-governmental organisations.